Կ-144³-20.05.2019-ՏՏԳԲ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

Լրամշակված

Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆԱՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 96-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը «մարզպետների միջոցով» բառերից հետո լրացնել «՝ իր կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա» բառերով:

2. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան լիազոր մարմինները պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են իրենց կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա, որոնք նախապես համաձայնեցվում են իրավական հսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:»:

~~ի 1 ին և 2 րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունն իրականացնում է սույն օրենքի 9 րդ հոդվածի 4 րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը՝ իր կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա:~~

~~2. Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության այն լիազոր մարմինները, որոնց իրավասության մեջ են մտնում այդ լիազորությունները՝ համաձայնեցնելով սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան լիազոր մարմինները պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են իրենց կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա, որոնք նախապես համաձայնեցվում են սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:»:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: